


ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՋ



ՀՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

ՄԱԿԱԲԱՐԻ ՈՒՂԴԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՍՏԱՏՄԱՆ 1900-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատասխանելով Մալաբարի ուղղափառ եկեղեցու կաթողիկոս Նորին Սրբություն Մորան Մար Բաֆիկոս Օգեն Ա-ի եղբայրական սիրայիր հրավերին՝ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջին ճաշակել էր հայ եկեղեցու բարձրատիման հոգևորականներից բաղկացած մի պատվիրակություն, Հայատանեաց եկեղեցու և իր անունից մասնակցելու համար 1972 թվականի դեկտեմբերի 31-ին Քորայանում տեղի ունենալիք հանդիսավոր նշանակություններին՝ նվիրված և Թովմաս առաքայի մարտիրոսության և Մալաբարի ուղղափառ եկեղեցու հաստատման 1900-ամբակին:

Պատվիրակությունը գլխավորում էր Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տերյանանը, որին ընկերակցում էին Երոսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետ տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ապահնանը, տ. Վահան եպիսկոպոս Տերյանը և ուրբանացոց հոգևոր հովիլ տ. Վագդիկ Վարդապետ Թաթոյանը:

Դեկտեմբերի 29-ին Պոմպեյի օրանավակայանում Երոսաղեմի սրբազն պատրիարքին դիմավորում են Մալաբարից ժամանակ պատգամավորներ, ինչպես նաև Վա-

հան եպիսկոպոս Տերյանը, Վազգենի վրա, Թաթոյանը և մի խումբ հնդկահայեր:

Հետևյալ օրը հայ եկեղեցու պատվիրակությունը ուղևորվում է Քոչին, որ Մալաբարի ուղղափառ եկեղեցու ծերունազարդ հայրապետը հատկապես ուղարկել էր իր փոխանորդ նորընտիր կաթողիկոսին, որը ի գործ նոգեստրականներից և աշխարհականներից բաղկացած մի ստվար պատգամավորության, ողջունում և բարի գայուսություն է մադրություն հայ եկեղեցու բարձրատիման ներկայացոցիներին:

Նոյն օրը հայ եկեղեցու պատվիրակությունը Մալաբարի կաթողիկոսի անձնական ավտոմեքենայով մեկնում է Քոչայամ, որ զանգերի դողանշների և եկեղեցական մեղենիների հնչյունների տակ հանդիսավոր թափորով առաջնորդվում է նախ տաճար և ապա՝ Վեհարան։ Վեհարանում ալեգարդ հայրապետը, եպիսկոպոսներով շրջապատված, բարիգալաւտյան շերմ խոսքերով ողջունում է հայ եկեղեցու պատվիրակությանը և միաժամանակ իր խորագրաց երախտագիտությունը հայունում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից Մալաբար եկեղեցուն և իրեն եղած այդ մեծ պատվի համար։

Դեկտեմբերի 31-ին, կիրակի օրը, Մալաբարի և Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում մատուցվում է հանդիսավոր պատարագ, բազմահազար հավատացրացների

և նեռավոր վայրերից եկած ովտավորների ներկայությամբ: Պատարագը, որին ներկա է լինում հայ եկեղեցու պատգամավորությունը, տեղի է ունենում արևածագին, համաձայն տեղական հնավանդ սովորության: Օրվա հորեայանական հանդիսության առիթով պատարագում է Մալաքարի ընտրյալ կաթողիկոսը:

Սուրբ պատարագի ընթացքում, հանուն Մայր Աթոռ և Հշմանական և Ամենայն Հայոց Հայրապետի, ողջունի խոսքով համբեմ է գալիս տ. Եղիշե սրբազն պատրիարքը, որը հաղորդելուց հետո հայ եկեղեցու Գահակալի սրտագին ողջունները, եղայրական սերն ու քարի կամեցողությունները Մալաքարի Հվիրապետական Աթոռին, նրա շնորհազարդ հայրապետին, ողջ միաբանությանը, ինչպես նաև եկեղեցում խմբված բազմահազար ժողովորին, շարունակում է իր խոսքը՝ ասելով.

«Քրիստոնեությունը երեք գլխավոր ճյուղեր ունի՝ ողջ ողջափառ, լատին և բողոքական եկեղեցները: Մենք, արևելյան ճյուղի Կյուրելյան ողջափառներ՝ հայեր, դպտիներ, աստրիներ, հարեցներ և մալաքարիներ, դարերի ի վեր, հակառակ բազմաթիվ դժվարություններու և մեր վրա խուժող հապահանձներու, հավատարիմ մնացած ենք մեր սուրբ հավատքին, դավանական ողջության և ավանդությանց, և ի գիտ մեր արյունին անապարտ պահած ենք անցյալին մեջի եկած այդ սրբազն ավանդները՝ փոխանցելով զանոնք հաջորդող սերունդներու, իրեն անգերազանցելի տրիտոր մեր աստվածարյալ նախնիքներուն, որոնցմով այսօր ևս կրնանք պարծենալ»:

Ապա Երուսաղեմի հայոց պատրիարքը իր խոսքի մեջ մասնավորապես նշուն է, որ, համաձայն քրիստոնեական եկեղեցու սրբազն և անփոփոխելի ավանդության, Մալաքարի Աթոռով դեռևս հնագույն դարերից ճանաչված է եղել որպես Թովման առաքյալի վիճակը, և այդ փաստը հիշատակված է նույնիսկ առաքելական կանոնների մեջ, որ որոշակի կերպով ասված է, թե «Հնոյիք և ամենայն գաւառը, որ շուրջ զնովալ են», կազմում են Թովման առաքյալի վիճակը: «Թովման առաքյալը, —շարունակում է այնուհետև սրբազն պատրիարքը, —միակ առաքյալն է, որ շոշափելեն վերջ միայն Տիրոց տեգախոց կողերը, հավատաց Անոր: Վերին և արյունի փաստերով շինված համոզումը նեռու է պատրանքեւ և հավերժության կանչի: Ահա թե ինչու երջանիկ և հպարտ պետք է զգա ինքազինքը Մալաքարի քրիստոնյաց եկեղեցին, որ իրեն իրեն առաքյալունի Թովմասը՝ առաքելական խմբի միակ լուսավորիչ գիտակցությամբ և հրճանաբառով, որուն խորը հավատքին մաքոր զգացումն է որ կթոթուա, Մալաքարի ողջափառ եկեղեցին կտոն այսօր իր հավատքի լուսավորիչ Թովմաս առաքյալի, ինչպես նաև

իրապաշտը, որ կրնա Քրիստոսի նկատմամբ կամացնող սրտերուն ցուց տալ իր արյունուն ձեռքերը իրեւ գերազույն հավատիքի իր հավատքին:

Եղիշե պատրիարքը իր խոսքը վերջացնում է քարի մատյանքով, որ բոլոր ողջափառ եկեղեցիները, իրենց նվիրապետական Աթոռներով և ժողովրդով, հաստատ և անսասան մնան իրենց ուղիղ հավատի մեջ՝ կազմակերպվելով ներքնապես և արտաքանապես, որպեսզի երկնավոր Հայոց շնորհի հրանց իր արքայությունը:

Մարտական պատրիարքի խոսքերը տեղում թագմանկում են անգերենի և ապա՝ մայրարերենի:

Նոյն օրը, ժամը 15-ին, հատուկ պատրիարքած մի զարդակառքի մեջ երկու կաթողիկոսների և եպիսկոպոսների հետ իրենց տեղերս են գրավում հայ եկեղեցու պատգամավորները և ծովածավալ բազմության միջով մեկուկես ծամ տևող դանդաղ ուղևորությունից հետո հանուն ընդարձակ հանդիսավորը, որտեղ տեղի էր ունենալու առարելական Աթոռոի հաստատման 1900-ամյակի տոնախմբությունը:

Հնդիանուր ցնծության և խանդավառության մթնոլորտում առաջին խոսք է առնուն ծերունագարդ կաթողիկոսը, որի ճառը կարդացվում է մալաքար մի եպիսկոպոսի կողմից: Ապա շնորհավորանքի պաշտոնական մի ողերձով հանդես է գալիս տեղի հանգապետը: Այնուհետև հրավիրվում է Երուսաղեմի հայոց պատրիարքը, որը, հանուն Հայաստանյաց եկեղեցու և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, քերում է իր ողջունի և խնդակցության խոսքը սույն հանդեսին՝ անգերեն լեզվով արտասանված հետևյալ սրտառու ճառով:

«Կուգամ Երուսաղեմեն և ձեզի բոլորին կրերեմ օրինությունն մեր Տիրոց աստվածակոն վայրերուն: Օրինություն և Հարության տաճարեն, մեր Տիրոց ծննդյան վայր Բեթղեհեմեն, Համբարձման Լեռնեն, Սիոնեն և սուրբ Երկրի սրբավայրերեն, նվիրագործված մեր Տիրոց արյունով և փառավորված իր հարությամբ:

Իրեն ներկայացնուից հայ եկեղեցվոր աստվածայալ, Պետին, Վազգեն Ա կաթողիկոսի, ձեզի կրերեմ նորին Ս. Օծության սրտագին շնորհակալությունն ու օրինությունը և մեր եկեղեցվոր մերը, ձեր այս մեծ հանդեսին և տոնակատարության ափիթով:

Հանդիսավոր գիտակցությամբ և հրճանաբառով, որուն խորը հավատքին մաքոր զգացումն է որ կթոթուա, Մալաքարի ողջափառ եկեղեցին կտոն այսօր իր հավատքի լուսավորիչ Թովմաս առաքյալի, ինչպես նաև

անոր քարոզությամբ հաստատված եկեղեցին հազար իննիարյուրամյակը:

Հորելյանները ցնծության և պահագման ափիթեներ են, հայտնելու մեր սերն ու երախտիքը հավերժ մեծարելի այն անձեռուն, որոք մեր տարի և հոգի լուսավորիչները եղան և հարստացուցին մեր կյանքը իրենց մեջի թողուցած աստվածային ժառանգությամբ: Նորախ է այսօր Մալաքարի ուղղափառ եկեղեցին, որ հակառակ իրեն պարտադրված դժոնակ պայմաններուն, գիտցած է տասնենին դարեր շարունակ հավատարիմ մնալ առաջայի թողուցած սրբազն ավանդին, և երշանիկ է այսօր, մեծարել կարենալու իր հավատքի լուսավորիչը, հայրուն և շնորհապարս հոգիով:

Նորին Ս. Օծություն Վազգեն Առաջին, Պետ Հայաստանայց առաքելական ուղղափառ եկեղեցվո, փափաքեցավ որ Երասանին պատրիարքը ներկայացնել Զինքը այս մեծ տոնակատարության մեջ, որովհետու 1963-ին, ձեր նախորդ Երշանկահիշատակ Մարքարիին Գևարկի կաթողիկոսի օրով, այս օրինայի երկրին տված այցելութենեն ի վեր, Նորին Վեհափառությունը իր մեջ կաման տակալին անմոռանալի հիշատակներ, զորս իր հետ տարակ Մալաքարի քոյլ եկեղեցին և պատվական ու քարեպաշտ ժողովորդեն: Մենք դավանակից եկեղեցիներ ենք և պարտինք իրարու զորավիր հանիսանալ, որովհետու բախտակիցներ եղած ենք պատմության ընթացքին, կարենալ պահելու մեջի փոխանցված սուրբ ավանդը և մեր եկեղեցիներու անկախությունը: Դարերով տառապած ու հայածված ենք ոչ միայն օտարադավաններեն, այլ նաև մեջի դավանակից եկեղեցիներեն: Այս տեսակետով պատիվ Մալաքարի ուղղափառ եկեղեցին որ ի գին իր կյանքին շանաց միշտ պահել իր ներքին անկախությունը և չծախել Թովմասի առաքելական վիճակը պահի մը ուսպապորի: Չատ բան կրունցուցած է իր դարավոր գոյության ընթացքին, ասկայն չէ հրաժարած իր առաքելական հիմնարկություննեն, իր հոգևոր ազատութենեն և անկախութենեն, իր ուղղափառ դավանութենեն: Հետուացած իր եկեղեցվո առաջնորդներն ու մարտիրոսները, որոնք եկեղեցվո միակ ու կենդանի գոյնակերության համար թափած են իրենց վարդագույն արյունը: Բայց

մանավանդ որովհետու նայ եկեղեցվո և Մալաքարի ուղղափառ եկեղեցվո լուսավորիչներն ու առաքելական հիմնարկութերը, Թովմաս և Թաղենու առաքյալները երկվորյակներ են, և համաձայն ավանդության Թովմաս առաքյալը Թաղենու Հայաստան դրկել է նետու Հնդկաստան եկալ: Երկու առաքյալ եղբայրները իրարու գործակիցներ եղած են հավատքի տարածման դաշտին մեջ, և իրենց թափած եղբայրական հարազատ արյունը որիշ զգացումով կրնա եղբայրացնել նայ և Մալաքար քոյլ եկեղեցիները, որոնք ոչ միայն իրենց ճակատագրով, այլ նաև իրենց քրիստոնեական խոնարհությամբ և ոգիով նաև են այնքան իրարու:

Քրիստոնեության սկզբունքն էր արյան եղբայրությունն երթալ մարդկային մեծ եղբայրության: Եթե բավեր միայն, որ եղբայրներ վլային իրարու, այլ եղբայրներ քոյլ մարդերուն, աշխարհին տանելու մարդկային իրայրության մեծ ավետիսը: Ավետարանի իմաստով ըմբռնված մարդկային եղբայրությունը ավելի բարյալական քան դավանական հաղորդություն մըն է: Եկեղեցիները իրարու հետ կարենալ միանալու հանուր պետք է նախ կարենան սիրել զիրար: Մեր հավատքին առաքեան Աստված է, այսինքն սերը, որու ճամփով միայն կրնանք հասեիր ճշնարության: Եկեղեցիները ավելի շուր և գործականապես պիտի սիրեին զիրար, եթե կարենային ճանչնալ զիրար շատ ավելի քան ինչ որ այժմ: Այդ փոխադարձ սերն ախտի ծեր հավատքի միությունը, որ սուրբերու հաղորդությունն է, որ անտեսանելի եկեղեցին է: Որքան իրարու մտնենանք և գործակցինք, այնքան ավելի կզորանան մեր եկեղեցիները: Մենք բոլորս ունինք նոյն հավատքը, նոյն դավանությունը, ունենալու ենք որեւն նոյն հոգին և նոյն հոգևոր ուղղությունը:

Այս զգացումով է, որ Նորին Ս. Օծություն Վազգեն Առաջին դրկած է զիս հոս, մասնակից և ուրախակից ըլլալու ձեր եկեղեցվու տոնակատարության և հաղորդության, աղոթելու ձեզի հետ և սիրու անտեսանելի պաշտոն մատուցանելու մեր Տիրոջ, որ վստահ ենք, թե մեր մեջն է այժմ, համաձայն իր բաժին թե՝ «ուր որ երկու կամ երեք հոգի իր անոնով հավաքվին, հոն՝ անոնց մեջն է ինքը»:

